

ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերնադրի տակ, Ի. Կուսիկեանը ղեկավարել էր մի շահեկան յօդւած «ԽՍ-ՀՄ ազգութիւնների դրականութիւնը» ածագրի 11-րդ համարում: Յօդւածը ներկայացնում է Հայաստանի մտաւորականութեան կատարած աշխատանքի մի մասը, որ, անշուշտ, հետաքրքրական է եւ «Վէճ»-ի ընթերցողների համար: Առաջ ենք բերում այդ յօդւածի հայերէն թարգմանութիւնը որով յապաւումներով: Հարկ ենք համարում աւելացնել, որ աշխատանքը կատարւած է մինչեւ վերջին եղբրական դէպքերը՝ Ա. Խանջեանի ինքնասպանութիւնը, հայ մտաւորականութեան դէմ դործադրւած հալածանքները եւ նոր աւերը Հայաստանի մշակութի ընագաւառում: ԽՄԲ.

Վերջին հինգ տարում Խ. Հայաստանի Լուսժողկուհատին կից գոյութիւն ունի յատուկ հրատարակչութիւն (այսպէս կոչւած՝ «Մեկոնեան փոնդ»), որը հայերէն լեզուով հրատարակում է հասարակական գիտութիւնների վերաբերեալ գրականութիւն: Հայաստանի Պետհրատից տեղալ հրատարակչութիւնը տարբերում է նրանով, որ նա տպագրում է, գլխաւորապէս, Հայաստանի պատմութեան, գեղագիտութեան, գրական գիտութեան, նկարական մշակոյթի պատմութեան եւ լեզուաբանութեան վերաբերեալ հիմնական աշխատութիւններ: Այս հրատարակչութիւնը լոյս է բնծայել 22 այնպիսի գրքեր, որոնք իրենց վրա լուրջ ուշադրութիւն են հրաւիրում ոչ միայն իրենց հետաքրքիր բովանդակութեամբ, այլ նոյնիսկ արտաքին տեսքով:

Հրատարակչութեան տպագրած աշ-

խատութիւնների հեղինակները Խ. Հայաստանի յայտնի մասնագէտներ են: Հրատարակչութեան բաց քողած արտադրանքը հանդիսանում է գիտական աշխատանքի զարգացման բազմաթիւ ցուցանիշներից մէկը Միութեան մէջ ընդհանրապէս եւ Հայաստանում մասնաւորապէս.

Մեծ արժէք են ներկայացնում այն աշխատութիւնները, որոնք նւիրւած են Հայաստանի եւ մասամբ ընդհանրապէս Անդրկովկասի պատմութեանը:

Այստեղ հարկաւոր է յիշել պրոֆ. Ա. ԽԱԶԱՏՆԱՆԻ գիրքը՝ «Սեպագիր արձանագրութիւնների դարաշրջանի Հայաստանի բնական պատմութիւնը»: Այս աշխատութիւնը, որ գրաւում է 555 էջ, հիմնւած է սեպագիր յիշատակարանների ուսումնասիրութեան վրա եւ ընդգրկում է Հայաստանի պատմութիւնը նոր դարաշրջանից 3000 - 600 տարի առաջ եղած ժամանակաշրջանը: Հեղինակն սպառնիջ կերպով օգտագործել է եւրոպական լեզուներով եղած ողջ գիտական գրականութիւնը եւ տեղ է այդ գրականութեան իւրայատուկ բնագաւառական ամփոփում: Գիրքն օժտւած է գիտական տեսլանքով, ունի մեծ քանակութեամբ նկարներ, գիտական գրականութեան մանրամասն ցուցակ, քարտէզ եւ ամփոփում ռուսերէն լեզուով: Որպէս յաւելւած՝ տրւած են քաղաքական վաւերագրերի քարտանդութիւններ: Պրոֆ. Ա. Խաչատրեանի աշխատութեան մէջ ընթերցողը գտնում է Հայաստանի հնագոյն պատմութեան վերաբերեալ անհրաժեշտ բոլոր նիւթերը: Հրատարակչութեան լոյս բնծայած

պատմական աշխատութիւնների մի ամբողջ շարքը պատկանում է յայտնի պատմաբան պրոֆ. Յ. ՄԱՆՆԻՆԻՆԻ գրչին: Պրոֆ. Մանանդեանի անունը յայտնի է նաեւ ռուսական պատմական գրականութեան մէջ՝ շնորհիւ ռուսներէն գրած նրա մի շարք աշխատութիւնների, որոնցից աչի է ընկնում հետագոտութիւնը «Հայաստանի քաղաքների առևտրի մասին՝ հնադարեան ժամանակների համաշխարհային առևտրի կապակցութեամբ» (1903 թ.): «Մեյ-ֆոնեան փոնդ»-ի հրատարակչութեան կողմից տպագրւած են պրոֆ. Յ. Մանանդեանի հետեւեալ հետագոտութիւնները. 1) «Կշիռները եւ չափերը հայկական հնագոյն աղբիւրներում», 2) «Մանրը հետագոտութիւններ», 3) «Երատոսֆենի ստադիոնը եւ պարսկական ասպարէզը» եւ 4) «Աւատակաւորութիւնը հնադարեան Հայաստանում»: Վերոյիշեալ բոլոր աշխատութիւնները մեծ արժէք են ներկայացնում պատմագետի համար, բայց առանձնապէս այժմեականը համադիսանում է վերջինը, որն ընդգրկում է Արշակունիների եւ մարգարանների ժամանակաշրջանը: Այս գիրքը, որ բաղկացած է 337 էջից, ունի 12 գլուխ, որոնք ներառւած են աղբիւրների եւ պատմագրութեան գնութեանը, Հայաստանի աւատական հասարակութեան դասակարգերին եւ դասերին, դասակարգային պայքարին, աւատակաւորութեան ծագմանը, գարգացմանը եւ Հայաստանում եղած նրա առանձնաշխարհայիններին: Գիրքը տալիս է փաստական ընդարձակ նիւթ եւ օգտագործել է հայկական հիմն աղբիւրները, որոնցում հեղինակն ամբողջում է իր բնորոշումները եւ եզրակացութիւնները: Այս աշխատութիւնը հանդիսանում է հեղինակի մի շարք հետագոտութիւնների իւրատեսակ ընդհանրացում:

Հայաստանի 13-րդ - 19-րդ դարերի ռուսամասերութեան տեսակէտից ար -

ժէֆաւոր նիւթեր են պարունակում «Համապարհադրների նօթերի» առաջին եւ վեցերորդ հատորները, որ կազմել է Յ. ՅԱԿՈՒԲԱՆԸ, եւ «Վրացական աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին» գրքի առաջին հատորը: «Համապարհադրների նօթերը» գրքի առաջին հատորը, որն ընդգրկում է 13-րդ - 16-րդ դարերը, պարունակում է Հայաստան եկած արեւմտեան մանապարհադրների նօթերի քարգմանութիւնները (Ռուբուկի, Պոլոյի, Կլավիխայի եւ ուրիշների), իսկ վեցերորդ հատորն ընդգրկում է 1800 - 1820 թւականները եւ պարունակում է իր մէջ Մալիուսի, Գարդանի, Ժորբի, Մորիերի, Կոցերույի եւ ուրիշ եւրոպացիների նկարագրութիւնները: Ողջ հրատարակութիւնը բաղկանալու է մօտ 12 հատորից, որտեղ սպառիչ կերպով ներկայացնւում են այն բոլոր տեղեկութիւնները, որոնք հաւաքւած են եւրոպացիների կողմից Անդրկովկասի մասին: Լայս տեսած երկու հատորները ցոյց են տալիս, որ Յ. Յակոբեանի ձեռնարկած աշխատութիւնը յաջողութեամբ կը պատկերէ, չնայած բազմաթիւ արգելքների: Այդպիսի արգելքներից մէկն այն է, որ բնագիրները դժարութեամբ են ստացւում, որովհետեւ մի քանի աղբիւրներ, չնայած որ մի ժամանակ տպւած են եղել Արեւմտեանում, հիմա շատ դժարութեամբ են գտնւում: «Նօթերի» բոլոր քարգմանութիւններն ունեն լուսաբանութիւններ (երբեմն բաւական մանրամասն), նկարներ եւ աշխարհագրական քարտէզներ: Հայերէն քարգմանութիւնն արած է հասարակ, պարզ լեզուով, դրա համար էլ հրատարակութիւնից կարող են օգտուել ընդերքողների լայն շրջանները: *)

*) Դժբախտաբար, Յ. Յակոբեանի թարգմանութիւնները, լեզուի տեսակէտից, չափ անյաջող են. անտանելի հանդէսով են կազմւած եւ դժարութեամբ են կարդացւում: ԽՄԲ.

Գրականագիտութեան աշխատութիւնների շարքին է պատկանում նաեւ Մ. ԱՅԵԳԵԱՆԻ «Հայ լեզւի տաղաչափութիւնը» եւ ԵՐԻԱՆԻ ԾԱՀԱԶԻԶԻ «Մի-
 ֆայէլ Նալբանդեանի Գիւտը»։ Պրոֆ. Մ. Արեղեանի աշխատութիւնը հանդիսանում է մի մանրամասն հետազոտութիւն, որը տալիս է հայկական տաղաչափութեան ներկայ դրութեան պատմութիւնը եւ վերլուծումը։ 452 էջից բաղկացած այս խոշոր գործը պէտք է համարել հայ գիտութեան մեծ նւաճումը Հայաստանում։ Անկասկած, այս գիրքը դեկավարող ձեռնարկ պէտք է դառնայ նաեւ երիտասարդ բանաստեղծների համար։

Ե. Շահագիրի գիրքը հանդիսանում է նոր նիւթերի ժողովածու հայ յայտնի հրապարակախօս, բնագաւառ եւ 60-ական թւականների յեղափոխական Մի-
 ֆայէլ Նալբանդեանի մասին։ Ժողովածուի նիւթերից ամենից անելի հետաքրքրական է Նալբանդեանի նամակը Պետրոպոլիսի բերդից։

Հրատարակութիւնների լեզական շարքին են պատկանում պրոֆ. Մ. ԱՅԵԳԵԱՆԻ «Հայ լեզւի տեւութիւնը» եւ պրոֆ. Հ. ԱՅԱՆԻ «Հայ լեզւի արմատական բառարանի» 4րդ – 7-րդ հատորները։ Մ. Արեղեանի, հայ լեզւի յայտնի մասնագէտի, գիրքն ամբողջովին զբաղւած է հնդեւրոպականութեան կանոնների հիման վրա։ Այս գիրքը պարունակում է մեծ ֆանալոգիայի նիւթեր հայ լեզւի վերաբերեալ, որոնք կարող են օգտագործուել, եթէ ընթերցողն ունենայ մերոպարական նիշտ դրութիւններ։

Պրոֆ. Հ. Անտոնեանի աշխատութիւնը, որի առաջին երեք հատորները լոյս են տեսել դեռ նախ քան «Միլիոնեան փոքր»-ի կազմակերպումը, իրենից խոշոր արժէք է ներկայացնում։ Մի քանի տասնեակ տարիների ընթացքում կազմւած «Բառարանը» հանդիսանում է հայ

լեզւի հանրագիտարան։ Անտոնեանի բառարանը գոյութիւն ունեցող բոլոր հայկական բառերը բացատրում է հնդեւրոպական տեսանկիւնով։ Հեղինակը հայ լեզուն համարում է «միասնական» մի զանգւած, իսկ այդ լեզւի առանձին բառերը «արմատական» կամ «փոխ առած» բառեր։ Բացատրութիւնների հետ միասին բերւած են ողջ աշխարհի լեզուագէտների բազմաթիւ կարծիքներն այդ գրքի մասին եւ բառեր՝ զանգան սիւտեմների բազմաթիւ լեզուներից։ Հեղինակը զարմանալի բարեխղճութեամբ անագին նիւթեր է հաւաքել։ Ամէն մի հատորը բաղկացած է 1200-ից մինչեւ 1500 էջից։ Այսպիսի բառարանի լոյս ընծայումը գիտական խոշոր փաստ է հանդիսանում։

Հրատարակչութիւնը լոյս է ընծայել մի շարք արժէքաւոր հետազոտութիւններ նաեւ Հայաստանի նիւթական մշակոյթի պատմութեան մասին։ Այստեղ պէտք է նշել ճարտարապետ Թ. ԹՈՐՈՒՄԱՆԵԱՆԻ աշխատութիւնը՝ «Շինարարական նիւթերի գործածութիւնը հնադարեան Հայաստանում»։ Ոչ պակաս շահագրգռական է նաեւ ճարտարապետ Ն. ԲՈՒՆԵԱՆԻ աշխատութիւնը՝ «Գառնիի հեթանոսական տաճարը» (յատակագծեր եւ յուսակարներ)։ Այս շարքին է պատկանում յայտնի ազգագրագէտ եւ ճարտարապետ (այժմ մահացած) Ե. ԼԱԼԱՆԻ աշխատութիւնը՝ «Գաւառների պեղումները եւ Հայաստանում» վերնագրով, որն ունի բազմաթիւ նկարներ։ Առանձնապէս հետաքրքրական է Ե. ԾԱՀԱԶԻԶԻ «Հին Երեսան» գիրքը, որի հեղինակն անագին նիւթեր է հաւաքել եւ առաջին փորձն է կատարել՝ տալու եւ Հայաստանի մշակութային պատմութիւնը։ Շուտով լոյս կը տեսնի մասնագէտ հնարան Ա. ՔԱՆՆԻՍԻ գիրքը «Վաղարշապատի պեղումների» մասին։

Ինչպէս տեսնում ենք, Հայաստանի նիւթական մշակոյթի պատմութեան ու-

սումնասիրութիւնը յաջող է ընթանում, եւ տպագրւած գրքերը տալիս են շատ արժէքաւոր նիւթ, որը հարստացնում է մեր գիտութիւնը:

Վերջում հարկաւոր է մատնանշել երաժշտագէտ ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ (այժմ մեռած) «Կոմիտասի ստեղծագործութեան վերլուծութիւնը» եւ «Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկը», Գ. ԼԵՒՈՆԵԱՆԻ «Հայ պարբերական մամուլն սկզբից մինչեւ մեր օրերը», Զ. ԿՈՐԿՈՏԵԱՆԻ «Խորհրդ. Հայաստանի բնակչութիւնը վերջին դա-

րում» (1831 - 1931) գրքերը: Հայ երաժշտութեան պատմութիւնը քիչ է ուսումնասիրւած, այդ իսկ պատճառով Ս. ՄԵԼԻՔԵԱՆԻ աշխատութիւնը արժէքաւոր գանձ է հանդիսանում ոչ միայն հայ երաժշտութեան, այլ նաեւ ընդհանրապէս երաժշտութեան պատմութեան տեսակետից: Հայերի մշակոյթի պատմութեան համար եւ որպէս տեղեկագիրք, այդ գիրքն անփոխարինելի է: Զ. ԿՈՐԿՈՏԵԱՆԻ գիրքը տալիս է Հայաստանի ազգաբնակչութեան անման հետաքրքրական պատկերը:

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

Ինչպէս քեբքերի մէջ երեւցած ազդերից յայտնի է, ծանօթ բանասէր - լրագրող Հ. Մ. Պոտուռեանը ձեռնարկել էր «Հայ Հանրագիտակ» բառարանի հրատարակութեան: Այդ գործի առաջին պրակը արդէն լոյս է տեսել: Հանրագիտակին բաժանորդագրւել ուգողները կարող են դիմել հեղինակի հասցէին. — P. M. Bodourian, Frumoasa - Cluc, (Roumanie).

Նմոյշի համար մեզ ուղարկւած պրակը (16 էջ), որ պարունակում է Ա տառի առաջին մասը՝ մինչեւ Արիւ, կարող է վկայել, որ Հ. Պոտուռեանը խիստ անհրաժեշտ աշխատանքի է ձեռնարկել, միայն գործի լրջութիւնը պա-

հանջում է լինել աւելի բժախնդիր եւ ջոկել նիւթի արժէքաւորը անարժէքից: Ներքին չէ Հանրագիտակի մէջ տեղ տալ հանրային կարեւորութիւն չներկայա - ցնող «գործի մարդկանց» կենսագրութիւններին, առեւտրական յայտարարութեան ձեռով գովասանքներ շռայլել եւ դնել նրանց հասցէները: Հանրագիտակը հասցէագիրք չէ, ոչ էլ ռէֆլամի միջոց: Հանրագիտակի մէջ պէտք է տալ տեղեկութիւններ հանրային բնոյթ եւ արժէք ներկայացնող առումների եւ գործերի մասին: Այս է էականը: Եւ ջանալ, որ այդ տեղեկութիւնները լինեն նշուած եւ լրիւ. նմոյշ - պրակից դատելով, դժբախտաբար, գործը այս տեսակետից անքերի կարելի չէ համարել:

Լ. ԷՍԱՃԱՆԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Բանաստեղծ Լեւոն Էսանեանի մահւան տարեիցի առթիւ, հանգուցելի յիշատակը յարգելու մտածումով, աքեմաբնակ մի խումբ հայ մտաւորա - կաններ որոշել են հրատարակել նրա անտիպ երկերի մի ժողովածու եւ այդ նպատակով կազմել են մի յանձնախումբ, «Պարբենոն» անունով, որի մէջ մտնում են Ա. Պետրոսեան, Գ. Լազեան, Վ. Դաբէսեան, Գ. Բաքադամեան

և Գ. Փափագեան: Հրատարակելիք գրքի հասոյթը պիտի յատկացւի բանաստեղծի գերեզմանի վրա շինելիք դամբանին: Յանձնախումբը կոչ է ուղղել հասարակութեան, որով բարոյական եւ նիւթական աջակցութիւն է խնդրում: Դրամական ամէն առաքում կարելի է անել զանազան Գ. Փափագեանի հասցէով՝

Rue Stade, 62, Athènes (Grèce).